



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

« 20 » շեկտեմբեր 2018 թ.

N 622-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ
ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ
ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱԶՄԱՆ, ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ
ԱՐՏԱՅՈԼՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել հանրային հատվածի կազմակերպությունների դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման, դուրսգրման և հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ԶԱՆԶՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2018 թվականի դեկտեմբեր
« 20 » -ի N 622 -Ա հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱԶՄԱՆ, ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ ԱՐՏԱՅՈՒՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով հանրային հատվածի կազմակերպություն հանդիսացող կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման, դուրսգրման և հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման կարգը:

2. Դեբիտորական պարտքը Կազմակերպությանը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից (դեբիտորներից) վճարման ենթակա պարտքի գումարն է, որն առաջացել է նրանց հետ տնտեսական փոխհարաբերությունների արդյունքում: Դեբիտորական պարտքերի ճանաչման, ապաճանաչման և չափման հարցերը կարգավորվում են ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի «Ֆինանսական գործիքներ» բաժին 19-ի դրույթներով:

3. Դեբիտորական պարտքը համարվում է ժամկետանց՝

ա) պայմանագրով նշված ժամկետում չմարվելու օրվան հաջորդող օրացուցային օրվանից, կամ՝

բ) մինչև պայմանագրով նշված մարման ժամկետի լրանալը կողմերի համաձայնությամբ նշված ժամկետը պայմանագրային կարգով երկարաձգելու դեպքում՝ նոր ժամկետում չմարվելու օրվան հաջորդող օրացուցային օրվանից:

Այն դեպքում, երբ կողմերը պայմանագրային կարգով չեն սահմանել պարտքի մարման ժամկետը, պարտքի մարման ժամկետ է համարվում գործառնության (գործարքի, փաստի) կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը:

4. Սույն կարգում սահմանված ժամկետներն առնչություն չունեն հայցային վաղեմության ժամկետների հետ:

5. Սույն կարգը չի տարածվում Կազմակերպության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով առաջացած դեբիտորական պարտքերի և դրանց գծով հաշվարկված տույժերի և տուգանքների վրա:

6. Սույն կարգի նպատակներով դեբիտորական պարտքի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը, դեբիտորական պարտքի անհուսալի ճանաչումը և դուրսգրումը չի տարածվում ՀՀ հարկային օրենսդրությամբ շահութահարկի հաշվարկման և վճարման նպատակով շահութահարկ վճարողների կողմից դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման հետ կապված հարաբերությունների վրա:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

7. Դեբիտորական պարտքերը, ելնելով ժամկետանց օրերի թվից, դասակարգվում են 5 դասի՝ ստանդարտ, ոչ ստանդարտ, կասկածելի, ռիսկային, անհուսալի: Ստանդարտ, ոչ ստանդարտ, կասկածելի, ռիսկային և անհուսալի դեբիտորական պարտքերի համար Կազմակերպությունը պետք է ձևավորի դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ՝ հետևյալ տոկոսադրույքներով.

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԴԱՍԸ	ՊԱՀՈՒՍՏԻՆ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ
1. Ստանդարտ՝ դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ	-
2. Ոչ ստանդարտ՝ դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 91-րդ օրվանից մինչև 180-րդ օրը ներառյալ	25 տոկոս
3. Կասկածելի՝ դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 181-րդ օրվանից մինչև 270-րդ օրը ներառյալ	50 տոկոս
4. Ռիսկային՝ դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 271-րդ օրվանից մինչև 365-րդ օրը ներառյալ	75 տոկոս
5. Անհուսալի՝ դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 366-րդ օրը	100 տոկոս

8. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու պահից մինչև 90-րդ օրը լրանալը համարվում է ստանդարտ: Ստանդարտ դեբիտորական պարտքերի համար Կազմակերպությունը դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ չի իրականացնում:

9. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 91-րդ օրվանից մինչև 180-րդ օրը լրանալը համարվում է ոչ ստանդարտ: Ոչ ստանդարտ դեբիտորական պարտքի համար Կազմակերպությունը պետք է պահուստ ուղղի դեբիտորական պարտքի 25 տոկոսի չափով գումար:

10. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 181-րդ օրվանից մինչև 270-րդ օրը լրանալը համարվում է կասկածելի: Կասկածելի դեբիտորական պարտքի համար Կազմակերպությունը պետք է պահուստ ուղղի դեբիտորական պարտքի 50 տոկոսի չափով գումար:

11. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 271-րդ օրվանից մինչև 365-րդ օրը լրանալը համարվում է ռիսկային: Ռիսկային դեբիտորական պարտքի համար Կազմակերպությունը պետք է պահուստ ուղղի դեբիտորական պարտքի 75 տոկոսի չափով գումար:

12. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 366-րդ օրը համարվում է անհուսալի: Անհուսալի դեբիտորական պարտքի համար Կազմակերպությունը պետք է պահուստ ուղղի դեբիտորական պարտքի 100 տոկոսի չափով գումար:

13. Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստը ենթակա է ճշգրտման առնվազն յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ճշգրտման արդյունքներն արտացոլելով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդում կամ պակասուրդում:

14. Ժամկետանց դեբիտորական պարտքի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների համար ստեղծվում է առանձին պահուստ:

15. Ժամկետանց դեբիտորական պարտքի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների հնարավոր կորուստների պահուստին մասհանումները կատարվում են այն նույն տոկոսադրույքի չափով, որով ձևավորվել է տվյալ ժամկետանց դեբիտորական պարտքի հնարավոր կորուստների պահուստը:

16. Ժամկետանց դեբիտորական պարտքի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների հնարավոր կորուստների պահուստի մեծությունը ենթակա է ճշգրտման

յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ճշգրտման արդյունքներն արտացոլելով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդում կամ պակասուրդում:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ

17. Անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքը ենթակա է դուրսգրման միայն այն դեպքում, երբ պարտապանը օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է սնանկ (անվճարունակ) կամ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվել է պարտքի մարման անհնարինությունը:

18. Անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքի դուրսգրման ժամանակ դուրս են գրվում նաև տվյալ դեբիտորական պարտքի գծով հաշվարկված տույժերը, տուգանքները կամ տոկոսները:

19. Կազմակերպությունը, որը տվյալ դեբիտորական պարտքի (ներառյալ՝ տույժերի, տուգանքների կամ տոկոսների) համար ձևավորել է պահուստ, անհուսալի դեբիտորական պարտքը (ներառյալ՝ տույժերը, տուգանքները կամ տոկոսները) դուրս է գրում պահուստի հաշվին:

20. Եթե տվյալ անհուսալի դեբիտորական պարտքի (ներառյալ՝ տույժերի, տուգանքների կամ տոկոսների) համար պահուստ չի ձևավորվել կամ ձևավորված պահուստը չի բավարարում այդ դեբիտորական պարտքի (ներառյալ՝ տույժերի, տուգանքների կամ տոկոսների) դուրսգրման համար, ապա անհուսալի դեբիտորական պարտքը (ներառյալ՝ տույժերը, տուգանքները կամ տոկոսները) կամ դրա պահուստի հաշվին չմարված մասը համարվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ծախս և վերագրվում է հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդին կամ պակասուրդին:

21. Դուրսգրման պահից սկսած՝ անհուսալի դեբիտորական պարտքը (ներառյալ՝ տույժերը, տուգանքները կամ տոկոսները) առնվազն 5 տարի հաշվառվում է Կազմակերպության արտահաշվեկշռում:

22. Դուրսգրված դեբիտորական պարտքերը (ներառյալ՝ տույժերը, տուգանքները կամ տոկոսները) մարվելու դեպքում դրանց մարման արդյունքում ստացված միջոցները համարվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի հասույթ և վերագրվում են այն հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդին կամ պակասուրդին, որում դրանք ստացվել են:

**4. ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒՑ ԱՆՀՈՒՍԱԼԻ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ
ՊԱՐՏՔԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ**

23. Սույն կարգով սահմանված դեպքերում դեքիտորական պարտքերի, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տույժերի, տուգանքների և տոկոսների հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը, դրա ճշգրտումը, անհուսալի դեքիտորական պարտքերի և դրանց գծով հաշվարկված տույժերի, տուգանքների դուրսգրումը հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում են հետևյալ ձևակերպումների միջոցով.

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԴԵՔԵՏ	ԿՐԵԴԻՏ
1. Ժամկետանց դեքիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորում	739	223
2. Ժամկետանց դեքիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ճշգրտում ա) պահուստի ավելացում	739	223
բ) պահուստի նվազեցում	223	639
3. Ժամկետանց դեքիտորական պարտքերի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների հնարավոր կորուստների պահուստի ձևավորում	739	223
4. Ժամկետանց դեքիտորական պարտքերի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների հնարավոր կորուստների պահուստի ճշգրտում ա) պահուստի ավելացում	739	223
բ) պահուստի նվազեցում	223	639
5. Անհուսալի դեքիտորական պարտքերի դուրսգրում դեքիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի հաշվին	223	221, 222 կամ դեքիտորական պարտքերի համապատասխան այլ հաշիվ
6. Անհուսալի դեքիտորական պարտքերի դուրսգրում հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդի կամ պակասուրդի միջոցով	739	221, 222 կամ դեքիտորական պարտքերի համապատասխան այլ հաշիվ

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԴԵՔԵՏ	ԿՐԵԴԻՏ
7. Ժամկետանց դեբիտորական պարտքերի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների դուրսգրում ժամկետանց դեբիտորական պարտքերի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների հնարավոր կորուստների պահուստի հաշվին	223	239
8. Ժամկետանց դեբիտորական պարտքերի գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների դուրսգրում հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդի կամ պակասուրդի միջոցով	739	239
9. Դուրսգրված դեբիտորական պարտքի և վերջինիս գծով հաշվարկված տույժերի, տուգանքների կամ տոկոսների վճարում. 9.1 պարտքի հակադարձում	221, 222, 239 կամ դեբիտորական պարտքի համապատասխան այլ հաշիվ	639
9.2 պարտքի վճարում	9943, 9999 կամ ներհոսքի համապատասխան այլ հաշիվ 251, 252 կամ համապատասխան այլ հաշիվ	221, 222, 239 կամ դեբիտորական պարտքի համապատասխան այլ հաշիվ 9943, 9999 կամ ներհոսքի համապատասխան այլ հաշիվ

5. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

24. ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանով հաստատված հաշվետվությունների պատրաստման նպատակով դեբիտորական պարտքերը ենթակա են դուրսգրման միայն այն դեպքում, երբ պարտապանը օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է սնանկ (անվճարունակ) կամ օրենսդրությամբ սահմանված

կարգով վավերացվել է պարտքի մարման անհնարինությունը: Դեբիտորական պարտքերը դուրս են գրվում ֆինանսավորման (ֆոնդերի) հաշվին:

Մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելը Կազմակերպության արտահաշվեկշռում հաշվառված դեբիտորական պարտքերը առանց սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված պահանջներին համապատասխան դուրս գրված լինելու դեպքում, Կազմակերպությունը պարտավոր է այդ դեբիտորական պարտքերը տեղափոխել և հաշվառել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Դուրսգրման պահից սկսած՝ դուրսգրված դեբիտորական պարտքը առնվազն 5 տարի հաշվառվում է Կազմակերպության արտահաշվեկշռում: